

## Chamber of Advocates of RA

---

**From:** Armen Hakobyan <hakobyan.am@live.com>  
**Sent:** 17 August, 2023 21:08  
**To:** Info Chamber Of Advocates  
**Subject:** թափուր աշխատատեղ  
**Attachments:** Krtser\_iravaxorhradtu.pdf

Հարգելի ՓՊ աշխատակազմ,  
սույն նամակին կից ուղարկում եմ «Լեզալ Էքսպերտ» ընկերությունում  
թափուր աշխատատեղի առկայության վերաբերյալ հայտարարությունը և  
խնդրում եմ այն տեղադրել ՓՊ կայք էջի «Թափուր աշխատատեղեր» բաժնում:

Կանխավ հայտնում եմ իմ շնորհակալությունը

Հարգանքով Ա. Հակոբյան





ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ  
«ԼԵԳԱԼ ԷՔՍՊԵՐՏ»

**ՊԱՇՏՈՆ՝ Կրտսեր իրավախորհրդատու**

Փաստաբանական գրասենյակը աշխատանքի է հրավիրում իրավունքի ոլորտում մասնագիտացած կամ մասնագիտանալ ցանկացող իրավաբանի: Աշխատանքային փորձը ցանկալի է, բայց՝ ոչ պարտադիր: Աշխատանքը կառաջարկվի հարցազրույցը և պարտադիր եռամսյա փորձաշրջանը հաջողությամբ ավարտած թեկնածուին:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- կազմել գրություններ, դիմումներ, միջնորդություններ, հայցադիմումներ, վճարման կարգադրություններ և այլ բնույթի իրավական փաստաթղթեր
- ըստ անհրաժեշտության կազմել և ղեկավարությանը ներկայացնել հաշվետվություններ
- կատարել գործերի ուսումնասիրություն, գործերի ընթացքի մասին պարբերաբար զեկուցել ղեկավարին
- տվյալ պաշտոնի հետ կապված այլ պարտականություններ:

**ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- քաղաքացիական օրենսդրության և քաղաքացիական դատավարության լավ իմացություն
- հայերենի գերազանց (գրավոր և բանավոր) իմացություն,
- անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը ցանկալի է,
- համակարգչային հմտություններ (word, excel),
- հաճախորդների սպասարկման հմտություններ,
- թիմային աշխատանքի և շփման հմտություններ,
- սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն,
- լարված աշխատանք կատարելու ունակություն,
- ուշադրություն մանրուքների նկատմամբ,
- կատարած աշխատանքի հանդեպ բարձր պատասխանատվություն,
- սովորելու կարողություն և հմտությունների շարունակական զարգացման պատրաստակամություն:

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները (CV կամ Resume) [info@legalexpert.am](mailto:info@legalexpert.am) էլեկտրոնային հասցեին:

**Կարևոր է:** Էլ-նամակում հարկավոր է պարտադիր նշել, թե ինչու է դիմումատուն ցանկանում աշխատել «Լեգալ Էքսպերտ» փաստաբանական գրասենյակում (մոտիվացիոն նամակ):